Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-612-06.06.2023-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 5.1-րդ հոդվածով.

«Հոդված 5.1. Համայնքային ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված գույքը

1. Կառավարության որոշմամբ համայնքային ոչ առեւտրային կազմակերպությանն անժամկետ եւ անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:

2. Կառավարությունն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից համայնքային ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված գույքը:

3. Համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

4. Համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Կառավարության որոշմամբ կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպության կանոնադրությամբ: Համայնքային ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված գույքը վարձակալության է հանձնվում Կառավարության հաստատած կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են պետական բյուջե:

5. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում համայնքային ոչ առեւտրային կազմակերպության ստացած եկամուտները համայնքային ոչ առեւտրային կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ համայնքային ոչ առեւտրային կազմակերպության կանոնադրությամբ:

6. Համայնքային ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից գույքը համայնքային ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքային ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ համայնքային ոչ առեւտրային կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: